

ՅՈՎԱԿԻՄ ԺՆԱԳՈՋԱ

ԻՆՉՊԷՍ ՏԵՐԵԻՆԵՐԸ

ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՅՈՐ ՆԱՆԿԱՍՈՎ

(Շար. Յաւել. 15 Օգոս. տես էջ 2)

ՏԵՍԻՒԼ ՏԱՄՆԸՄԼԿԵՐՈՐԴ

ՅՈՒԼԻՍ և ՆԵՆՆԵԼԷ:

ՅՈՒԼԻՍ

Ձինքը զրկեցիր որպէս զի հետս մինակ մնաս:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, Հայրս ըսած էր որ զինքը իրեն զրկեմ:

ՅՈՒԼԻՍ

Կրնանք իմանալ այն անպատշաճ քրքիջին պատճառը:

ՆԵՆՆԵԼԷ կը սկսի երթալ:

ՅՈՒԼԻՍ

Հոս եկուր:

ՆԵՆՆԵԼԷ

Մայր, աւելի լաւ է որ թողուս զիս երթամ:

ՅՈՒԼԻՍ

Ինչ որ կը մտածես զիտեմ: Աշխարհքիս մէջ արժըթէ միայն մէկ շրջանակ մը կայ:

ՆԵՆՆԵԼԷ

Այդ բաներուն վրայ չի խօսինք: Շատ զուեհիկ ստորին բան է: Քեզիդ բան մը չեմ ըսեր, բան մըն ալ չեմ ուզեր զիմանալ:

ՅՈՒԼԻՍ

Կարծեցիր թէ քուկինդ ըլլայ է՞:

ՆԵՆՆԵԼԷ

Թող որ երթամ: Ձի խօսինք: Խորշում կը զգամ:

ՅՈՒԼԻՍ

Կը կասկածէիր: Ինձի քու աղուոր հարց ու փորձդ ըրիր:

ՆԵՆՆԵԼԷ

Իմս էր, զանիկայ ճանչցայ: Անոր վրայ խօսելէն առաջ կը կասկածէի: Խօսելէն ետքը սպաւնով եղայ: Երէկ, անցնելու ատենս, տեսայ որ սենեակս մտար: Պարտէզ իջայ, քեզի կասկած չտալու համար սկսայ երգել:

Գու զլուխդ դուրս կարկանցիր վարագոյր. ներուն մէջէն: Քանի մը վայրկեանէն ետքը նորէն վեր ելայ, տեսայ որ բացուած էր գաւրակս, և ամէն բան հասկցայ: Ուզեցի անոր վրայ հետզ խօսիլ՝ ցուցնելու համար որ իմացեր եմ: Երբեք այս խօսքիս վրայ ալ պիտի չի գառնայի:

ՅՈՒԼԻՍ

Կը հնարես: Ստոյգ չէ որ ես սենեակդ մտայ:

ՆԵՆՆԵԼԷ

Թո՞մին զուրս ելլիզ տեսաւ:

ՅՈՒԼԻՍ

Գուռը բացած պիտի ըլլամ զքեզ փնտռելու համար:

ՆԵՆՆԵԼԷ

Եթէ քեզի հաճելի էր կրնայիր անի ինձմէ ուզել:

ՅՈՒԼԻՍ

Հաճելի չէր:

ՆԵՆՆԵԼԷ

Իրացնէ: Այն բանին որուն համար պիտի գործածէիր...

ՅՈՒԼԻՍ

Ի՞նչ բանի պիտի գործածէի: Հիմա ուրիշ բան մըն ալ ելաւ մէջտեղ: Ի՞նչ բանի պիտի գործածէի: Երախտագիտութիւնս կ'ուզէի ցուցնել անոր՝ որ աշխատեցաւ արուեստը ինձի սորվեցնելու: Իմս էր շրջանակը որուն մէջ սպտկեցր ազուցի: Տես որ կ'ըսեմ քեզի, այնչափ անմեղ բան է: Իմ մէկ կենդանադիրս էր: Գու և ոչ զիտէիր:

ՆԵՆՆԵԼԷ

Կը հասկցուէր:

ՅՈՒԼԻՍ

Դո՞ւ շատ բաներ կը հասկնաս:

ՆԵՆՆԵԼԷ

Շատ, չի կարծածէդ աւելի:

ՅՈՒԼԻՍ

Անտարակոյս: Ժամանակէ մը ի վեր է որ հետքերուս ետեւէն ես: Գեղեցիկ յարգանք: Չանդրադաճնալ կը ձեւացնէի՝ այն խեղճ մարդէն որ քու հայրդ է ակնածեալով:

ՆԵՆՆԵԼԷ

Է՛հ:

Գառն փրկա:

ՅՈՒԼԻՍ

Բայց հիմա որ յանդգնեցար կասկածի վրաս, կ'ուզեմ որ ինչուան խորը հասնինք: Լոյս, լոյս:

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ, մայր, ոչ: Կրիւներ չի հանենք:

ՅՈՒՆԻՈՆ

Չէ, չէ, պէտք է մէյտեղ ելլայ: Ապացոյց կ'ուզէ: Չիս կ'ամբաստանեն: Ապացոյց: Հայրդ պիտի դառն:

ՆԵՆՆԵԼԷ

Կ'աղաչեմ:

ՅՈՒՆԻՈՆ

Կը վախնաս, է՛հ:

ՆԵՆՆԵԼԷ

Վախնա՞մ:

ՏԵՍԻՆ ՏԱՍՈՒԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹՈՄԻ և ՎԵՐՈՅԻԶԷԼՆԵՐԸ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ, Թոմի: Եկուք, եկուք: Աւելի աղէկ ժամանակ չէիր կրնար դալ:

ՅՈՒՆԻՈՆ:

Կը վստահեմ Թոմիին վրայ:

ՅՈՒՆԻՈՆ

Ի՞նչ ըսել է:

ԹՈՄԻ

Ի՞նչ եղաւ:

ՅՈՒՆԻՈՆ

Եղածը այն է՝ որ քոյրդ կ'ամբաստանէ զիս թէ իրեն դարակնեբը խառնեք եմ: Կ'ըսէ որ երէկ զիս տեսեր ես, առնել...

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛չ, առնել, ոչ: Անեական մտնալդ կը ժխտէիր դու: Ըսի թէ Թոմին ելլալդ տեսեր է:

ԹՈՄԻ

Սակայն ի՞նչ խնդիրներ են ստանք: Մէկդի թողունք, ես բան մը չեմ գիտեր:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ, Թոմի: Մի փախիտիք պատասխանել: Կ'ուզեմ որ կարենամ ըսել թէ ստեցի: Երէկ հոս քեզի հանդիպեցայ երբոր պարտեղէն վեր կ'ելլայի, Հարցուցի քեզի... Կը յիշեմ թէ շատ անտարբեր ձայնով ըրի, վասն զի քեզ կասկածի մէջ ձգել չէի ուզեր: Հարցուցի քեզի թէ մայրս տեսա՞ր: Չէի ուզեր սենեակը մտնալ և զինքը դեռ հոն գտնալու վտանքի մէջ դնել զիս: Այս բանս զիս շատ վարանքի մէջ կը ձգէր: Եւ դու ինծի պատասխանեցիր...

ԹՈՄԻ միշտ անալալալակ մնաց օդը նայելով:

ՆԵՆՆԵԼԷ սեւեռելով իրեն վրայ:

Իրաւ չէ:

ԹՈՄԻ

Չեմ յիշեր:

ՅՈՒՆԻՈՆ յաղթակոհ:

Ա՛հ:

ԹՈՄԻ կամացուկ Յուլիայի:

Լո՛ւէ:

ՆԵՆՆԵԼԷ

Եւ շես ալ յիշեր որ դու էիր ինծի առաջին կասկածը արթնցնողը...

ԹՈՄԻ

Ի՞նչ կասկած:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ, մոռցած պիտի ըլլաս, Թոմի: Ա՛յնքան սկար յիշողութիւն մը ունիս:

ԹՈՄԻ

Վերջացնենք, է՛հ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛չ, ոչ, կշռելու համար թէ միշտև ուր կը հասնի իմ հնարողութիւններս, այս ալ պէտք է ըսուի: Ութ օր տառի, ճիշդ անցած հինգշաբթի, քեզի երեսուն ֆրանքի վրայ խոսեք էի...

ԹՈՄԻ

Դու կ'երազես...

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞րայր, քեզմէ ներողութիւն կը խնդրեմ, ստախոս մըն եմ:

ՅՈՒՆԻՈՆ

Կը տեսնամ:

ԹՈՄԻ կամացուկ Յուլիայի:

Կ'աղաչեմ քեզի...

ՅՈՒՆԻՈՆ

Ինծի բուսական է, բուսական ... Սորվիս պիտի... բուսական է...

Կ'երթայ իր սենեակը:

ՏԵՍԻՆ ՏԱՍՈՒԻԵՐԿԵՐՈՐԴ

ԹՈՄԻ, ՆԵՆՆԵԼԷ ԵՄՈՅ ՄԱՅՍԻՍՈՍ:

ՆԵՆՆԵԼԷ լուսութենէ մը ետքը:

Խեղճ Թոմի: Ո՛րչափ քեզի սուղի նստած պիտի ըլլայ:

ԹՈՄԻ յուզուած հազիւ զպղնով արցունքները և մեծ դառնութեամբ:

Երկրի վրայ ամէնէն աւելի սիրական անձը դու ես:

ՆԵՆՆԵԼԷ

Գիտեմ:

ԹՈՄԻ

Բան մը մի ըսեր ինծի:

Կ'երթայ կը նստի ստոյիկին սուշ և զուրք վրան կը կոխեցնէ:

ՄԲՅՍԻՄՈ խորէն ձեռքը թղթով մը :  
Նէննէլէ :

ԹՈՍԻ

Ո՛հ :

Ես ալս կ'ըսայ և երթալու :

ՆԵՆՆԵԼԷ ԹՈՍԻ :

Հոս կեցիր, Հոս կեցիր, զինքը կը զրկեմ :  
ԹՈՍԻ կը դռանայ կը գնէ զուսը սուղին վրայ :  
ՆԵՆՆԵԼԷ կ'երթայ Մաքսիմոսի, կը քաշէ  
զինքը մէկդի, և կ'ըսէ իրեն կամացուկ :  
Զմեզ թող վայրկեան մը :

Կը նայի իրեն :

Ի՞նչպէս տոգոյն ես : Ի՞նչ հանդիպեցաւ :  
ՄԲՅՍԻՄՈ հեռագիր մը կու տայ իրեն :  
Կարգա : Այն բարեկամէս է որուն քով  
եղբայրդ տեղադրեալ էի :

ՆԵՆՆԵԼԷ կը կարդայ ստեղծուն ցաւալից  
շարժանքով :

ՄԲՅՍԻՄՈ նորէն կ'առնէ հեռագիրը :

ՄԷԿ օր միայն գնացիր էր Հոն :

Քայլ մը կ'առնէ զեզ ի Թոմի :

ՆԵՆՆԵԼԷ

Իրեն մի խօսիր : Թող զիս . . . Հօրս ըսիր :

ՄԲՅՍԻՄՈ

Իրախոյս չունեցայ :

ՆԵՆՆԵԼԷ

Վար ի՞նչ . . . Ի՞նչ Հոն վարը, մարգա-  
գետինը : Կարը կը կանչեմ զքեզ :

ՄԲՅՍԻՄՈ

Այո :

Կ'երթայ :

### ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸԶՈՐՍԵՐՈՐԴ

ԹՈՍԻ և ՆԵՆՆԵԼԷ :

ՆԵՆՆԵԼԷ Թոմիին կ'երթայ, զուսը վեր կը  
վերցնէ և կը պահէ զինքը :

Ի՞նչ պիտի ըլլայ քեզի : Ի՞նչ պիտի ըլլայ  
մեզի :

ԹՈՍԻ

Ի՞նչ կ'ուզեր քեզմէ Մաքսիմոս :

ՆԵՆՆԵԼԷ

Իրեն այն մէկ բարեկամին նամակը կար-  
գալ տուաւ ինձի : ՄԷԿ օր միայն Հոն գնա-  
ցիր ես :

ԹՈՍԻ

Վեր կ'ըլլայ և կը հեռանայ : Ճիշդ է :  
Այնպէս է :

ՆԵՆՆԵԼԷ

Հոս կեցիր . . . Հոս մօտս կեցիր . . . որ  
խօսինք :

ԹՈՍԻ

Ի՞նչ օգուտ ունի :

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ օգուտ մը չունի : Քիչ մը աւելի տան-  
չուելու համար : Մայրս զիտէր :

ԹՈՍԻ կ'ակնարկէ զլուով այն :

ՆԵՆՆԵԼԷ

Քու խորհրդակէցող էր :

ԹՈՍԻ

Կուահեց :

ՆԵՆՆԵԼԷ

Իս ոչ : Երբեք կուահած պիտի չըլլայի :  
Տունէն դուրս եղած ժամերուդ՝ մեր կ'եր-  
թայիր դու : Կ'ուզեն ըսել ուր կ'երթայիր :  
Ո՛հ, կրնաս խօսիլ, զիտես : Աղիկի մըն եմ  
որուն կրնայ զուրցուիլ եղածը : Այն տիկնոջ  
կ'երթայիր : Անոր սիրաւարուած ես :

ԹՈՍԻ կ'ակնարկէ ոչ :

ՆԵՆՆԵԼԷ

ՄԷԿ օր միայն զիմացար : Կը յօգնեցնէր :  
Նուստուսացած կը գրայիր զքեզ է՞ : Ինչպէս  
ես առաջին զասիս : Քեզի խեղճ և զոգնիկ  
յան մը կ'երեւար : Կամ արդեօք սկիզբէն  
կը մտածէիր արդէն որ պիտի չի զիմանայիր  
այն աշխատութեան :

ԹՈՍԻ

Եթէ զիմանայիր դու որ քու ձայնիդ հըն-  
չիւնը միայն ինչ վրտ կը պատճառէ ինձի :

ՆԵՆՆԵԼԷ

Կը հաւատամ, ես իսկ իմ անձիս անշարժ  
վրտ եմ : Մենք երկուքնիս մէկտեղ շատ կե-  
ցանք : Կը ինչ աղէկ : Եթէ կարտուի, ինձի  
համար ալ լինցած է : Առաջին անգամ է որ  
քու խորհուրդներդ չեմ զուշակեր : Իրարու  
միտքը այնչափ կը հասկնայինք : Երբ Հայրս  
նորէն կարգուեցաւ, կը յիշես, խօսք մը յը-  
սինք . . . երբեք . . . ոչ իրեն վրայ, ոչ անոր  
վրայ : Միայն զիս ամէն առաւօտ կը սանձիր  
չըջագայութեան : Անշարժ իրարու միտքը կը  
հասկնայինք : Բարի էիր :

ԹՈՍԻ

Դիւրին :

ՆԵՆՆԵԼԷ

Բարի ես :

ԹՈՍԻ դռան կը ծպտի :

ՆԵՆՆԵԼԷ

Սկիզբէն արդէն կը մտածէիր, ըսէ, որ  
այն աշխատութեան պիտի չկարենայիր դի-  
մանայ : Այն ստեղծուն ի վեր է երբոր ըսիր  
Մաքսիմոսի թէ կ'ընդունիմ :

ԹՈՍԻ

Ինչու կը յամառիս :

ՆԵՆՆԵԼԻ

Չեմ գիտեր: Ինծի կ'երեւնայ թէ ամէն  
բան այն կէտին վրայ է:

ԹՈՄԻ

Չեմ հասկնար:

ՆԵՆՆԵԼԻ

Ինծի կ'երեւնայ որ բոլոր ապագան հոն է:  
Ինծի կ'երեւնայ որ ամենէն աւելի կորեւոր  
հարցմունքն է որ կրնամ ընել քեզի: Անի-  
կայ քեզի չեմ կրնար բացատրել: Այնպէս  
կու գայ ինծի:

ԹՈՄԻ

Տարօրինակ է որ կը հարցնես ինծի բան  
մը որ այս օրերս շատ անգամ մտքէս անցաւ:  
Կ'ուզես բռել, թէ վայրկեան մը զոնէ կրցայ  
կամենալ:

ՆԵՆՆԵԼԻ

Թերեւս: Այո: Փոնէ վայրկեան մը:

ԹՈՄԻ

Դժուարին: Երբոր ընդունեցայ, դիմանալ  
կամենալու համոզում էի... Ասկայն, եթէ  
սետար զիս, իսկայն նստայ գրեցի ամսակ  
մը՝ գրկելու համար հոն ուր ինծի նախաձեռն  
կը սպասէին: Էւ մինչդեռ կը գրէի, կը լռէի  
ներսէս հեղինական ձայն մը: Կեցցես: Բաց  
դուս մը պահէ: Էւ փաշած էի որ այն որո-  
շողութեան առանց բունութեան տեղիք տուի:  
Ես ինծի կ'ըսէի. բարեկասե՛հ ժամուն պիտի  
կամենամ: Կը հաշուէի թէ իրերը զիս գրաւեն:  
Քնացի հոն: Տէրը ինծի բոլոր զործատունը  
այցելել տուաւ: Աշուտը: Կրբին և ապահով  
ուժերու կազմած մը: Ետքը սարաւ զիս իրեն  
աշխատանոցը և ինծի գրել տուաւ երկու  
կամ երեք նոմակ... ոչինչ բաներ: Վրաս  
բան մըն այ ապաւորութիւն չըրաւ: Այ յոգ-  
նութիւն մը, ոչ յափրանք մը:

ՆԵՆՆԵԼԻ

Էւ ոչ ալ ետանդ մը:

ԹՈՄԻ

Էւ հետեւեալ օրը չի դարձայ:

ՆԵՆՆԵԼԻ

Մաքառեցար:

ԹՈՄԻ

Այ: Չորոշեցի բնաւ որ չի դառնամ: Չի  
գարձայ:

ՆԵՆՆԵԼԻ

Իրերը գրեզ չէին գրաւած:

ԹՈՄԻ

Այ:

ՆԵՆՆԵԼԻ

Պէտք է գործերու տալ ինքզինքը: Ի՞նչ  
միտքը գրեր ես ընելու:

ԹՈՄԻ

Չեմ ուզեր մտածել վրան:

ՆԵՆՆԵԼԻ

Կրնան քեզի հրամայել որ չի մտածես:

ԹՈՄԻ

Մտածութիւնը միշտ այն կէտին վրայ է,  
բայց ուրիշներ կը թողում որ անոր դիմացը  
անցնին: Խոր պտտկրներ չունիմ: Կը սեւ-  
նամ զիս ինչպէս հայլիի մը մէջ: Ինչպէս  
թէ տեսնայի անտարրեր անձ մը: Գիտեմ  
թէ ինչ պիտի հանդիպի, բան մը պիտի  
չընեմ որ հանդիպի, բան մը պիտի չընեմ  
որ չհանդիպի: Կը թողում զիս հասանքին:  
ՆԵՆՆԵԼԻ: Իբրեւ շարունակելով իր մէկ մտ-  
ձուութիւնը:

Աւվէի հասանքին, յորդուժեան պահուն  
... որ և ոչ խզուելու ժամանակ կու տայ:  
Ժայռէ ժայռ և բունէ բուն վարնուած...:

ԹՈՄԻ

Ի՞նչ կ'ըսես:

ՆԵՆՆԵԼԻ

Ոչինչ: Մտքսիմասին խօսքի միտքս կու  
գտն... դու հասանքի անուն տուիր...  
և... Աւշ մի գներ: Ինծի կը վերաբերի:

ԹՈՄԻ

Հայրս... տեղեկացած է:

ՆԵՆՆԵԼԻ

Գեա չէ:

ԹՈՄԻ

Մօրս հետ կենակցութիւնը քեզի անտա-  
նելի է է՛հ:

ՆԵՆՆԵԼԻ

Ո՛հ: Ասկէ ետեւ:

ԹՈՄԻ

Գիտակցութիւն չունեցող մէկն է: Պիտի  
զլորի ինծի նման, անկումէ անկում...:

ՆԵՆՆԵԼԻ

Դու ալ իրեն վրայ գէշ չես կրնար խօսիլ:  
Իրեն հետ միտքանած ես:

ԹՈՄԻ

Չիս այնչափ կ'անարգես:

ՆԵՆՆԵԼԻ չի պատասխաներ:

ԹՈՄԻ

Էւ դեռ ալ չես գիտեր: Եթէ գիտնայիր...  
Պէտք է քեզի ամէն բան բռնել: Կ'ուզես:  
Ինչպէս երբեմն անցած ժամանակները:

ՆԵՆՆԵԼԻ

Ըսէ, այո... Ի՞մէն բան ըսէ ինծի: Ո՞ր  
մըն է ամէն բան ըսելը: Ո՞րչափ որ քեզի  
ծանրի կը նստի այնչափ աւելի պէտք է խօ-  
սիս: Ո՞վ գիտէ: Ետեւ ըսէ... Թոմի:

ԹՈՄԻ

Միտքս կու գայ Մեղասգաղիոյ երգ մը:  
Սրտէն փախած ձայն...:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ խեղճութիւն:

ՔՈՍԻ տխրամած և բուռն:

Կնոջ մը ստակ պարտական եմ: Կը հասկըննա: Ետտ մը: Իրմէ չի խնդրեցի զանոք....

ՆԵՆՆԵԼԷ

Մի անմեղադիր ընք գեղգ:

ՔՈՍԻ

Իրաւ է: Ճշմարտութիւնը պէտք է ըսել ամբողջ: Չարը և բարին: Չանոնք ընծայեց ինծի.... վրայ տուաւ.... կը կորսնցնէի, կ'ուզէի բրած ֆեսաս հանել.... կեանքիս տասը տարին կու տայի գտնալու համար.... և գտայ հոն գանոնք զիւրին զիւրին: Ամէն բան զիւրին եղաւ իմ կեանքիս մէջ: Ամէն բան զիւրին սկիզբէն, և շարունակաբար, և միշտ. զիւրին ապրիլը, զիւրին ծանօթութիւնները, զիւրին հեշտութիւնները, զիւրին մեծարանքը և բարեսիրութիւնը, զիւրին բարեպաշտութիւնը, զիւրին մոլութիւնները.... բան մը միայն դժուարին.... կամօքը, բայց ինծի կարեւոր չէր: Միշտն է երեք ամիս առաջ, ինծի համար կամօք կը կոչուէր կամ սովորութիւն կամ քմակահոյք.... այն օրը որ պէտք եղաւ կամենալ....

ՆԵՆՆԵԼԷ

Ժանգոտած էիր:

ՔՈՍԻ

Ո՛հ միայն ժանգոտած ըլլար.... կը պակէր անիւր, կը պակէր կազմածը:

ՆԵՆՆԵԼԷ

Չես կրնար կամենալ և ոչ շարք:

ՔՈՍԻ

Ո՛հ շարք.... Քոյ որ ինքը ընէ: Անիկայ ինծի համար ուզողը կայ:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛րչափ պարտական ես:

ՔՈՍԻ

Անօգուտ է:

ՆԵՆՆԵԼԷ

Եթէ գրէինք հօրաքրոջս որ այնչափ հարուստ է:

ՔՈՍԻ

Ինծի զրկէ պիտի փողպատի գնդասեղ մը:

ՆԵՆՆԵԼԷ

Մաքսիմուէն կ'ուզեմ:

ՔՈՍԻ

Ապահովապէս կու տայ քեզի: Բայց յետոյ: Նորէն պիտի սկսիմ: Ուստի լաւագոյն է վերջնական կերպով մէկ անգամէն ընկզմիլը:

ՆԵՆՆԵԼԷ փեռեկած աչքեր սեւեռելով իրեն վրայ: Ընկզմիլը:

ՔՈՍԻ Երեւոյնով:

Չուրին մէջ չէ, զիտես.... Համարեցար թէ զիս սպաննելու համար կը խօսիմ: Մէկդի: Անոնցմէ չեմք:

ՆԵՆՆԵԼԷ

Չէ Է՛հ:

ՔՈՍԻ

Միլիոններու մէջ ընկզմիլը: Կը հասուցանեմ: Կը կարգուիմ հետը:

ՆԵՆՆԵԼԷ սուկացած:

Դու այն կնոջ հետ կը կարգուիս:

ՔՈՍԻ

Տրուած խոստում է: Ութ օրէն:

ՆԵՆՆԵԼԷ

Կ'երկունսմ որ ութ օրէն հետը չես կարգուիր:

ՔՈՍԻ

Ո՛չ կրնայ արդիւլ:

ՆԵՆՆԵԼԷ

Կը տեսնաս:

ՔՈՍԻ

Նայէ Մարքսիմոս եթէ ինծի խօսք մը միայն ըսէ....

ՆԵՆՆԵԼԷ

Ոչ....

ՔՈՍԻ

Եւ նաեւ խորհուրդ ալ կու տամ քեզի որ հօրս բան մը չընես: Օգուտ մը չունի: Աւելորդ է ժամանակէն սուալ զինքը տրտմեցընելը: Եթէ գիտնալու ըլլայ.... սկնթարթի մը մէջ տուռէն կ'ելլամ կ'երթամ: Ազատ եմ: Գործը լինանէն ետքը.... Ժընէ՛վ կը ձգենք.... և կը գիտնայ:

ՆԵՆՆԵԼԷ

Հիմակ ո՛ւր կ'երթաս:

ՔՈՍԻ

Հոն:

ՆԵՆՆԵԼԷ

Երթաս բարով, Քոսի:

ՔՈՍԻ

Դու ալ ինծի խօսք պիտի չի դարձնես է՛հ:

ՆԵՆՆԵԼԷ

Ըսածդ չես գիտեր: Երթաս բարով, Քոսի: Երթաս բարով, խեղճ Քոսի:

ՔՈՍԻ կ'ելլայ շտապով:

Քարգ. Հ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ԳԱՍԳԱՏԵՍԻԱՆՆԵ

Շարայարեղի